# ՄԵՆՈՒԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆ ԱՂՁՆԻՔ ԻՐ ՄԻԱՆՁՆՅԱ ԳԱՀ ԲԱՐՁՐԱՆԱԼՈՒ ՏԱՐՈՒՄ

ԽՈՒԴԱՆՅԱՆ Հ. Հ.

*Աղձնիքին առնչվող՝ Վանի թագավորության (Ուրարտու) հնագույն սեպագիր աղբյուրները վերաբերում են Մենուայի (Ք.ա. 810-786 թթ.) գահակալության ժամանակաշրջանին*[1] *ու թվագրվում են Ք.ա. IX դ. վերջով և VIII դ. սկզբով: Այդ աղբյուրների ուսումնասիրությունը կարող է ոչ միայն լույս սփռել Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում ընթացած պատմական գործընթացների վրա, այլև հնարավորություն ընձեռել նորովի անդրադառնալու ցայսօր սակավ ուշադրության արժանացած մի շարք իրողությունների:*

*Վանա լճից հյուսիս գտնվող Պատնոց-Բադնոց գյուղի շրջակայքում ուրարտաան շինությունից հայտնաբերված սեպագիր արձանագրության առաջին հատածում*[2] *ասվում է, որ* **իր գահ բարձրանալու տարում** *Մենուան արշավել և գրավել է* ***ապստամբած*** *Շաթիրու «երկիրը», նվաճել Խուրադինակու(նի), Գիդիմարու(նի), Թարգուվանանա(նի) քաղաքները, հասել Բուշտու «երկիր»՝ ընդհուպ մինչև Մալմալի լեռները, միաժամանակ նշում, որ Բիայնիլիի նախկին արքաներից ոչ ոք երբևէ չի հասել Խուրադինակու քաղաքը, մինչդեռ ինքը գրավել և ոչնչացրել է այն*[3]*:*

---

[1] *Վերջին ժամանակներում Վանի թագավորության արքաների իշխելու տարիների և, հետևաբար, նույն ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների պարբերացման առնչությամբ պատմագիտության մեջ առաջ են քաշվել նոր տեսակետներ: Դրանք դեռևս համընդհանուր ընդունելության չեն արժանացել ոլորտի մասնագետների կողմից, ուստի սույն աշխատությունում մենք հետևում ենք Բիայնայի արքաների թագավորության տարիների պարբերացման՝ դասականորեն ընդունված մոտեցումներին: Այսուամենայնիվ, աշխատանքում քննվող պատմական որոշ իրադարձությունների պարբերացման խնդիրները հետագա հնարավոր պատմագիտական սրբագրումների դեպքում, ըստ այդմ, ենթակա են համապատասխան խմբագրման [տե՛ս* **Grekyan Yervand.** *The Regnal Years of the Urartian Kings Argišti Menuahi and Sarduri Argišti, Aramazd (Armenian Journal of Near Eastern Studies), Vol. IX, Issue 1, Association For Near Eastern And Caucasian Studies, Yerevan, 2015 և այլ հեղինակներ]:*

[2] **Арутюнян Н.** *Корпус урартских клинообразных надписей* (այսուհետև՝ *КУКН), Е., 2001, N 148, (5)-(22), с. 143-144, N 149, (4)-(19), с. 147,* **Salvini M.** *Corpus dei Testi Urartei 1 (այսուհետև՝ CTU) Vol. I, Roma, 2008, A 5-11A, (5)-(22), p. 201-202, A 5-11B, (4)-(19), p. 203.*

[3] *Շաթիրու և նրա հարևան Բուշտու «երկրները» պետք է փնտրել Ուրմիա լճից հարավ ընկած շրջաններում: Ինչ վերաբերում է Խուրադինակու(նի), Գիդի-մարու(նի), Թարգուվանանա(նի) բնակավայրերին, ապա տեքստից չի հասկացվում՝արդյոք դրանք եղել են Շաթիրու «երկրի» կազմո՞ւմ, թե՞ ոչ: Ուշագրավ է, որ Պատնոց-Բադնոցից գտնված այս արձանագրության, ինչպես նաև Արգիշտի I-ի Խորխոռյան տարեգրության մեջ Մալմալին վկայակոչվում է Բուշտու «երկրի» հետ միասին: Թերևս Մալմալի լեռները գտնվել են Բուշտու «երկրի» հարևանությամբ՝ Ուրմիա լճի հարավում՝ լինելով վերը նշված «երկրների» ծայր հարավային*

*Հայտնի է, որ Մենուան մասնակից է եղել տերության գործերին դեռևս հոր՝ Իշպուինիի (Ք.ա. 825-810 թթ.) և իր՝ նրա հետ համատեղ գահակալության շրջանում: Այդուհանդերձ, խոսքն այստեղ վերաբերում է նրա՝ միանձնյա գահ բարձրանալուն (ընդունված է համարել Ք.ա. 810 թ.): Այդ մասին է, թերևս, վկայում այն հանգամանքը, որ նրա գահակալման սկզբում* ***ապստամբում*** *Շաթիրու(նի) «երկիրը»: Սա հին Առաջավոր Ասիայում բազմիցս փաստագրված և հանրահայտ պատմական իրողություն է, երբ նոր արքայի գահ բարձրանալիս հաճախ անհնազանդություն են ցուցաբերում ծայրամասային կենտրոնախույս ուժերը՝ փորձելով ազատվել կենտրոնի գերիշխանությունից կամ ձեռք բերել քաղաքական ինքնուրույնություն կամ էլ դաշնակցության մեջ մտնել երրորդ ուժի հետ: Սովորաբար այդ ապստամբությունները բավական դաժանորեն ճնշվում էին:*

*Ինչպես կարելի է դատել արձանագրության առաջին հատվածից, Ուրմիո ավազան կատարած այս արշավանքը եղել է Մենուայի միանձնյա գահակալության եթե ոչ անդրանիկ, ապա առաջին ռազմաքաղաքական ձեռնարկումներից մեկը՝ թվագրվելով Ք.ա. 810 թ. առաջին կեսի վերջերով կամ նույն թվականի երկրորդ կեսով: Սակայն այստեղ մեզ համար առավել առաջնահերթ է տվյալ արձանագրության ոչ թե վերը ներկայացված, այլ դրան հաջորդող՝ Աղենիքին առնչվող հատվածը, ուստի նպատակահարմար ենք գտնում ստորև մեջբերել սույն պարբերությունն իր ընթերցմամբ և համապատասխան թարգմանությամբ.*

| | | |
|---|---|---|
| 22. | ...i-ku-ka-a-nU MU | *Միևնույն տարում Ալզի «երկիրը»* |
| | KUR al-zi-e du-ur-ba-i-e | *ապստամբել էր/ թշնամի եղավ:* |
| 23 | ma-nu[4] ú-lu-uš-ta-be D hal-di-ni | *Արշավեց Խալդին Մենուայից՝* |

*սահմանը [*Арутюнян Н. *Топонимика Урарту (այսուհետև՝ ТУ), Е., 1985, с. 61, 63, 133, 176, 233, 241, КУКН, N 148, (5)-(22), с. 143-144, прим. 6, 18-19, с. 145, 146, N 173-III, (39)-(40), с. 170]:*

[4] «du-ur-ba-i-e ma-nu» *արտահայտությունը (ընթերցվում է* «durbaie manu») *առկա է նաև սույն արձանագրության 7-8-րդ տողերում (*KUR ša-ti-ru-ú-ni du-ur-ba-i-e ma-nu): *Մ. Խաչիկյանը* /d/ṭurbayə/ *գոյականը մեկնաբանում է որպես «թշնամի, ապստամբ»՝ բերելով նաև վերջինիս խուռիերեն* /ṭurUbə/ *զուգահեռը: Ուրարտական մեկ այլ արձանագրությունում վկայված* /Diauhe šišuhanə d/ṭurbabə/ *նախադասությունը նույն հեղինակը թարգմանում է հետևյալ կերպ՝ «Դիաուխցին կրկին/երկրորդ անգամ ապստամբեց»:* /d/ṭurbabə/-*ն ուրարտերենի* /d/ṭurb/-/durb(a)-/ *«թշնամաբար գործել, ապստամբել» բայի 3-րդ դեմքի եզակի թվի անցյալ ժամանակի խոնարհումն է: Իր հերթին, Ն. Հարությունյանը* «dur(u)baĭe» *բառին հատկացնում է «թշնամի», «ապստամբ/խռովարար» իմաստները: Ինչ վերաբերում է* «durbaie manu» *արտահայտության* «manu» *բաղադրիչին, ապա այն ուրարտերենի* «man(u)-»՝ *«լինել, գոյություն ունենալ» անանցողական բայի 3-րդ դեմքի եզակի թվի անցյալ ժամանակի խոնարհումն է: Մ. Սալվինին «durbaie manu» արտահայտությունը թարգմանում է որպես «ապստամբ դարձավ» (իտալերեն բնօրինակում՝* «divenne ribelle»), *իսկ Ն. Հարությունյանը՝ «ապստամբած էր» ձևով (ռուսերեն բնօրինակում՝ «восставшей была[ ) [***Хачик н М.*** *Хур—рытскийяяурартскийязыки,яЛ.—яЕ.,я1985,яс.я46—47,я63,я69,я127,яКУКНяNя148,я(7)-(8), (22)-(23), с. 143-144* (*տե՛ս նաև նույն աշխ. վերջում, համապատասխան բառերի ներքո՝ Лексика урартского языка), CTU,яАя5—11А,я(7)—(8),я(22)—(23), p. 202]: Ըստ ամենայնի՝ բառացի թարգմանությամբ* «durbaie manu» *արտահայտութ-*

| | | |
|---|---|---|
| | $^{m}$mԿ-nu-a $^{m}$iš-pu-u-i-ni-hi-ni-e | *Իշպուինիի որդուց առաջ,* |
| 24. | za-nš-gu-ni $^{URU}$qu-ṭu-me-e ha- ú -ni<br>$^{KUR}$al-zi-e ha- ú -ni | *ոչնչացրեց Կուտումե քաղաքը,*<br>*նվաճեց Ալզի «երկիրը»,*<br>*նվաճեց* |
| 25. | $^{KUR}$ša-nš-nu- ú -i-ni-i<br>$^{KUR}$e-ba-a-ni ši-di-iš-t ú -ni Ė.GAL | *Շաշնու «երկիրը»[5], կառուցեց*<br>*ամրոց* |
| 26. | $^{URU}$qu-ṭu-me-e...[6] | *Կուտումե քաղաքում...[7]:* |

*Այսպես, վերլուծելով մեջբերված հատվածը, հարկ է նախ ուշադրություն դարձնել այն կարևոր հանգամանքին, որ Շաթիրու «երկրի» ապստամբություն բարձրացնելու և դեպի Ուրմիո լճի ավազան Մենուայի կատարած արշավանքի միևնույն տարում, այն է՝ Ք.ա. 810 թ., ընդվզում է նաև Ալզի «երկիրը»: Ապստամբությանը հետևում է Մենուայի ձեռնարկած մյուս արշավանքն արդեն Հայկական Տավրոս և Վերին Տիգրիսի ավազան: Ինչպես կարելի է հասկանալ տվյալ հաղորդման ընդհանուր տրամաբանությունից, այն տեղի է ունեցել Ալզիի ապստամբելու տարում: Ըստ ամենայնի՝ հենց Ք.ա. 810 թ. բիայնական զորքերը գրավում և ավերում են Ալզիի Կուտումե քաղաքը, այնուհետև նվաճում Ալզի և Շաշնու «երկրները»[8]: Արշավանքի ավարտին Մենուան ամրոց է կառուցում Կուտումեում, ինչի համար, անշուշտ, սակավ ժամանակ չէր պահանջվի Բիայնայի տիրակալից, ուստի այս արձանագրությունը պետք է թվագրվի Ք.ա. 810 թ. հետո ընկած ժամանակահատվածով:*

*Այդուհանդերձ, սույն արշավանքի բուն դրդապատճառները, հիշատակվող տեղանունների աշխարհագրությունը, տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը, արշավուղին և դրանց առնչվող մի շարք հանգամանքներ կարող են որոշակիորեն պարզ դառնալ միայն յուրաքանչյուր խնդիրն առանձին քննության արժանացնելու պարագայում:*

---

*յունը նշանակում է «թշնամի/ապստամբ դարձավ/եղավ»: Այսուհանդերձ, ընդհանրացնելով վերն ասվածը, կարելի է պնդել, որ* «durbaie manu» *արտահայտությունը տվյալ դեպքում անհրաժեշտ է հասկանալ «ապստամբել էր» նշանակությամբ:*

*[5] Արձանագրության 25-րդ տողում հիշատակված* ša-áš-nu-ú-i-ni-i *տեղանունը Մ. Սալվինին իր թարգմանության մեջ ներկայացնում է* Šašnu *ձևով, ինչը, կարծում ենք, ընդունելի է (CTU, A 5-11A, (25) p. 202):*

*[6] Արձանագրության տառադարձված այս հատվածը մեջբերված է Մ. Սալվինիի ընթերցումից (CTU, A 5-11A, (22)-(26), p. 202):*

*[7] Արձանագրության վերը բերված հատվածի խմբագրական թարգմանությունը կատարել ենք՝ համեմատելով տարընթերցումների հետ, հիմնվելով մի շարք արտահայտությունների առանձին մեկնաբանությունների և դրանց լեզվական առանձնահատկությունների վրա:*

*[8] Մենուայի այս արշավանքի տարեթիվն առաջին անգամ ճշգրտել է Հ. Կարագյոզյանը. այդ մասին տե՛ս* **Карагёз н О.**яГородяК32 3меяЗрар2 ск, хя, с2 очн, ков *[Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1974, N 3, էջ 191-192]:*

**Վկայակոչվող տեղանունների տեղադրավայրը:** *Ալզի «երկիրը»* (KUR Alzi) *նույնացվում է անտիկ աղբյուրների՝ Սասունից հարավ-արևելք գտնվող Արզանենեի* (Arzanenae), *ինչպես և Աղձնիք նահանգի առաջին գավառ Աղձն/Արձն-ի ու նրա համանուն կենտրոնի հետ՝ տեղադրվելով Վերին Տիգրիսի հյուսիսային ավազանում*[9]*: Ս. Երեմյանն Արզանենեն նույնացնում է ժամանակակից Խարզան կամ Զոխ վայրի, իսկ դրա վարչաքաղաքական կենտրոն Արզան քաղաքը՝ Շուկառաբայի հետ*[10]*: Վերջինս Արզան քաղաքի ասորերեն անունն է, որը նշանակում է «մեծ շուկա», «գլխավոր շուկա»*[11]*, դեռևս հնագույն ժամանակներից առևտրային կենտրոն լինելու պատճառով,ինչն իր հերթին մատնանշում է վաղնջական անցյալում այս բնակավայրի նշանակալից լինելու հանգամանքը: «Աշխարհացույց»-ում Աղձնյաց բդեշխության կենտրոն Աղձն գավառը կոչվում է «Աղձնիք Հայոց, որ է Արձն»*[12]*:*

*Շաշնու «երկիրը»* (KUR Šašnuini) *մի շարք ուսումնասիրողներ նույնացրել են Աղձնիքի Սանասունք գավառի հետ*[13]*: Ընդհանուր առմամբ համամիտ լինելով այս մոտեցմանը՝ կարծում ենք, սակայն, որ տվյալ արձանագրությունում հիշատակվող Շաշնու «երկիրը» գլխավորապես վերաբերում է Սանասունքի վարչաքաղաքական կենտրոն Սասունին և նրա հարակից տարածքներին: Այն, ըստ էության, տեղանքով համապատասխանում է այժմյան Սասուն կամ Քյաղքիկ գյուղին, որտեղ և գտնվում է Սանասուն բերդը*[14]*: Այս տարածքներում էր կազմավորվել Շուպրիա (Շուբրիա) թագավորությունը՝ հայկական վաղ պետական կազմավորումներից մեկը*[15]*:*

*Կուտումե քաղաքը* (URU Qutume) *վաղուց նույնացված է միջնադարյան աղբյուրներում հիշատակվող՝ Աղձնիքի Ազնվաց ձոր գավառի Կոտում բնակավայրի հետ*[16]*, որը գտնվում է Վանա լճի հարավարևմտյան անկյունում՝*

---

[9] **Քոսյան Ա.,** *Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական աղբյուրների), Ե., 2004, էջ 35,* **Խաչատրյան Վ.,** *Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում (տեղագրական և ստուգաբանական քննություն), Ե., 2012, էջ 23,* **Խուդանյան Հ.,** *Հնագույն Աղձնիքի տեղագրության և տնտեսության մասին (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2014, N2, էջ 59):*

[10] **Երեմյան Ս.,** *Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Ե., 1963, էջ 33, 39:*

[11] *Նույն տեղում, էջ 74:*

[12] *Նույն տեղում, էջ 33:*

[13] *Ն. Հարությունյանը Շաշնու(ինի) բնակավայրը տեղադրում է Վերին Տիգրիսի ավազանում՝ Ալզիի հարևանությամբ (ТУ, с. 242): Տե՛ս նաև* **Խաչատրյան Վ.,** *նշվ. աշխ, էջ 23, 148,* **Կարագեոզեան Ց.,** *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում I, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), Ե., 1998, էջ 41, նաև ծնթ. 1 և հղված գրականությունը:*

[14] **Երեմյան Ս.,** *նշվ. աշխ., 1963, էջ 79:*

[15] *Հայ ժողովրդի պատմություն, 8 հատորով, հ. 1, Ե., 1971, էջ 293:*

[16] **Kapar¸зян О.,** *նշվ. աշխ., էջ 191-192, КУКН, N 148, (24), с. 141-142, прим. 23, с. 144,* **Саркисян Д.** *Страна Шубриа, Е., 1989 (քարտեզ),* **Հարությունյան Բ.,** *Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, Ե., 2001, էջ 205,* **Խաչատրյան Վ.,** *նշվ. աշխ., էջ 168:*

*Թուխ գետի ափին, Բաղեշից՝ հյուսիս-արևելք, իսկ Զորա պահակից՝ հարավ-արևելք[17]: Ուշագրավ է, որ ինչպես այս սեպագիր հաղորդման մեջ Կուտումեն հիշատակվում է որպես Ալզի «երկրի» քաղաք, որտեղ Մենուան ամրոց է կառուցել, այնպես էլ X դ. պատմիչ Թովմա Արծրունին է վկայակոչում Աղձնիքի Կոտում բնակավայրը, որը հայտնի էր իր իշխանական ամրոցով[18]: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ տվյալ ժամանակահատվածում հետագայի Ազնվաց ձոր գավառի տարածքը եղել է Ալզիի կազմում, քանզի այն չի հիշատակվում որպես առանձին աշխարհագրական միավոր: Բիայնական սեպագիր աղբյուրներում չկան նաև Աղձնիքի մյուս գավառներին առնչվող տեղանուններ:*

*Բ. Հարությունյանը կարծում է, որ բացառությամբ Սանասունքի՝ Աղձնիքի լեռնային գավառները, որոնք շատ փոքր տարածքներ էին զբաղեցնում, ամենայն հավանականությամբ, սկզբնապես գոյություն չեն ունեցել որպես վարչական միավորներ և ի հայտ են եկել ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով[19]: Մենք հիմնականում համաձայն ենք Բ. Հարությունյանի մոտեցմանը, ինչն ամրապնդվում է նաև քննության առարկա արձանագրությունում, բացի Շաշնուից և Ալզիից, այլ «երկրների» ուղղակի վկայակոչումների բացակայությամբ: Այսպիսով, Աղձնիքի գավառներից Կեթիկը, Տատիկը և Ազնվաց ձորը ձևավորվել են Արձնի տարածքում, իսկ Երխեթքը, Գզեղիքը և Սալնաձորը՝ Սանա-սունքի[20]: Պետք է մակաբերել, որ Աղձնիքի Սանասունք և Աղձն/ Արձն գավառները, որոնք քննվող վավերագրում Ալզի և Շաշնու «երկրներն» են, ներառել են վերը նշված վեց գավառները: Ինչ վերաբերում է Նփրկերտ (Մեծ Ծոփք) և Քեղ կամ Անգեղտուն գա-վառներին, ապա դրանք գտնվում են Աղձնիքի արևմտյան հատվա-ծում և տվյալ պարագայում դուրս են մեր ուսումնասիրության շրջանակից: Այսպիսով, վերը ներկայացված «երկրները», պատմական այս ժամանակաշրջանում ներառելով նաև հետագայում Աղձնիքի տարածքում ձևավորված լեռնային գավառներից վեցը, գտնվել են գլխավորապես Հայկական Տավրոսի արևելյան հատվածում:*

**Տարածաշրջանի տեղագրությունը և ռազմավարական-տնտեսական նշանակությունը:** *Անդրադառնալով Աղձնիքի ֆիզիկա-աշխարհագրական բնութագրին՝*

---

[17] **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.,** *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Ե., 1991, էջ 227: Տե՛ս նաև Մուշ-Տարոնը 1914 թ. դրությամբ, Սասունը 1914 թ. դրությամբ, նարտեզներ (մասշտաբ 1:160000), նարտեզի հեղինակ՝ Բաղալյան Գ., նարտեզագիր՝ Մարտիրոսյան Մ.:*

[18] **Թովմա Արծրունի և Անանուն,** *Պատմություն Արծրունյաց տան (աշխարհաբար թարգմանությունը՝ Վարդանյան Մ.), Ե., 1985, էջ 460-461:*

[19] **Հարությունյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 204:*

[20] *Նույն տեղում:*

անհրաժեշտ է հասկանալ այն կարևորագույն դերակատարությունը, որն ունեցել է Հայկական Տավրոսը լեռնաշխարհի ողջ պատմության ընթացքում: Լեռնա-շղթան հարավային ուղղությամբ ունի մի շարք լեռնաճյուղեր, որոնցից շատերը հասնում են ընդհուպ մինչև Արևմտյան և Արևելյան Տիգրիսները: Դրա հյուսիսային լանջերը զառիթափ են, իսկ հարավայինը՝ մեղմաթեք[21]: Այն ունի մի շարք բնական լեռնանցքներ, որոնք, փաստորեն, հնագույն ժամանակներից ծառայել են որպես սահմանային դարպասներ: Երկիրը եզերող լեռնաշղթաներից դեպի միջնաշխարհ տանող այդ լեռնանցքները հնում կոչվել են «դրունք»: Դրանք կանխորոշում էին ճանապարհների այն ցանցը, որով միմյանց հետ բանուկ ուղիներով կապվում էին լեռնաշխարհի բոլոր բնակավայրերը: Այդ ուղիները ոչ միայն ներպետական, այլև միջպետական նշանակություն ունեին, ինչը հնարավորություն էր ընձեռում լեռնաշխարհը ճանապարհային ցանցով կապել տարածաշրջանի այլ երկրների հետ[22]:

Լեռնանցքներն ունեն մոտ 1200-2400 մ բացարձակ բարձրություն: Ձմռանը տեղացած առատ ձյունը փակում էր նահանգներն ու գավառներն իրար կապող լեռնանցք-ուղիները, և մեկուսացումը հաճախ տևում էր 3-5 ամիս: Հենց դա էր պատճառը, որ այս տարածաշրջանում պատերազմները և ճակատամարտերը տեղի էին ունենում գերազանցապես գարնան երկրորդ կեսից մինչև աշնան առաջին կեսը[23]:

Հայկական Տավրոսի լեռնանցքներից մշտապես առավել նշանակալից է եղել Զորա պահակը կամ Բաղեշի լեռնանցքը (Ռահվա), ինչը բազմիցս հիշատակվում է օտարերկրյա արշավանքների ժամանակ: Ըստ Բ. Հարությունյանի՝ Արտաշատը Տիգրանակերտին կապող «Արքունի պողոտան» անցել է Զորա պահակ լեռնանցքով և Բաղեշի կիրճով, այնուհետև՝ Տարոնի դաշտով[24]:

Աղձնիքի հյուսիսային շրջանները՝ ներառյալ Սասունը, ունեն խիստ լեռնային ռելիեֆ ու կլիմայական դաժան պայմաններ, որտեղ ձմեռը տևում է ավելի քան յոթ ամիս: Բոլոր ճանապարհները, առանց բացառության, փակվում են, լինում են դաժան բքեր, նույնիսկ շատ մոտ գտնվող բնակավայրերի միջև միանգամից

---

[21] **Հակոբյան Թ.,** *Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը, Ե., 1990, էջ 11:*

[22] **Գրիգորյան Ա.,** *Հայկական լեռնաշխարհի տարածաշինական կառուցապատման օրինաչափությունները [Հայկական լեռնաշխարհ: Հանրապետական գիտաժողովի նյութեր, 2015 մարտի 24-25 (նվիրված Հայոց Մեծ եղեռնի 100-ամյակին), Ե., 2015, էջ 296-297]:*

[23] **Սայադյան Հ.,** *Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական պայմանների ռազմաաշխարհագրական գնահատումը (նույն տեղում, էջ 78-79):*

[24] **Հարությունյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 195, 203-204: Հայաստանի ազգային ատլաս (ատլասի գլխավոր խմբագիր՝ Վարդանյան Մ., հատորի պատասխանատու խմբագիր՝ Հարությունյան Բ.), հ. Բ, Ե., 2008, էջ 22-23, 25, 40-41:*

*ընդհատվում է հաղորդակցությունը[25]: Այս ամենն, անտարակույս, նպաստում էր նրան, որ տարածաշրջանը տարվա կեսից ավելին ապահով լիներ արտաքին հարձակումներից և ներխուժումներից, իսկ լեռնային տեղանքն, իր հերթին, մի բնական հսկայականապատնեշ-ամրոց էր և՛ լեռնաբնակների,և՛ Միջնաշխարհի համար:*

*Հայկական Տավրոսի ընդերքն արդեն այն ժամանակ հայտնի էր իր հանքային հարստություններով՝ հիմնականում կապարի պաշարներով, ինչով հատկապես հարուստ էր Շուպրիան (Սասնա լեռների շրջան)[26]: Այստեղ հատկապես զարգացած էր պղնձահանքերի, ապա և երկաթահանքերի շահագործումը: Թերևս Շուպրիան իր տարածքում ուներ «հանքանյութի արդյունահանմանը մասնագիտացած երկրագործական-անասանապահական շրջաններ, որոնք ասորեստանցիները չէին կարող գցել իրենց ձեռքը, քանի որ Շուպրիայի բնակավայրերը գտնվում էին դժվարանցանելի լեռներում»[27]: Արմե-Շուպրիան մասնակցում էր երկաթի տարանցիկ առևտրին և հյուսիսասորիքյան ու արևելափոքրասիական քաղաքպետությունների հետ միասին վերածվում է կռվախնձորի՝ Ասորեստանի և Ուրարտուի միջև[28]: Կարծում ենք՝ այն ավելի շուտ խիստ կարևոր ռազմավարական նշանակություն ուներ թե՛ Վանի թագավորության, թե՛ Ասորեստանի համար, քանի որ այդ տարածքն իրեն ենթարկելով կամ վերահսկելով՝ կողմերից յուրաքանչյուրը դիրքային առավելություն էր ստանում մյուսի նկատմամբ:*

**Արշավանքի դրդապատճառները, ժամանակը և արշավուղին:** *Ըստ Ն. Հարությունյանի՝ դեպի Աղձնիք կատարած Մենուայի արշավանքը պայմանավորված էր բռնկված ապստամբությունը ճնշելու հանգամանքով[29]: Նման ռազմական որոշման պատճառ կարող էին ծառայել ոչ միայն հարկերը վճարելուց հրաժարվելը, մեկ այլ կողմի հետ դաշնակցային հարաբերությունների մեջ մտնելը, այլն՝ նախահարձակ լինելու հանգամանքը: Այս տեսակետը հատկապես կարևորվում է այն պատճառով, որ վերը ներկայացված բնակավայրերը հիմնականում գտնվել են լեռնային դժվարամատչելի տեղանքում, և տեղաբնիկ լեռնցիները, միանգամայն հնարավոր է՝ օգտվել են իրենց դիրքային առավելությունից: Կարելի է ենթադրել, որ Ալզի «երկիրը», որն այդ ժամանակ, ըստ երևույթին, հարկատու է եղել կամ ենթարկվել Վանի թագավորությանը, ընդվզել է՝ հրաժարվելով տրամադրել սահ-*

---

[25] **Հակոբյան Թ.,** *Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Ե., 1960, էջ 233-234, նույնի՝ Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 2007, էջ 225, 232:*

[26] **Հակոբյան Թ.,** *Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը, էջ 11, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Ե., 1971, էջ 377:*

[27] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 425 և հղված գրականությունը:*

[28] *Նույն տեղում, էջ 486:*

[29] **Արտյուն н Н.***яБ, айн, л, —Урар2 3,яСПбхя2006,ясхя140х*

մանված հարկերը: Այս ամենը հիմք է տալիս մեկ այլ ենթադրության, որ Ալզին կարող էր հնազանդեցված լինել դեռևս Մենուային նախորդած արքաների օրոք: Հակված ենք կարծելու, որ, հավանաբար, դա տեղի է ունեցել Մենուայի նախորդի՝ Իշպուինիի կամ էլ Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալության տարիներին: Ինչ վերաբերում է Շաշնու «երկրին», հազիվ թե այն նախկինում երբևէ հարկատու եղած լիներ Վանի թագավորությանը:

Ըստ էության, գլխավոր հիմնապատճառը, որը և դարձել է այս արշավանքի խթանը, Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան սահմանների վերահսկողությունն էր, ինչն էլ ապահովում էր բիայնական տերության անվտանգությունը Ասորեստանի ռազմա-քաղաքական նկրտումներից: Այդ մասին են վկայում նաև Բաղեշի լեռնանցքից ոչ հեռու գտնվող Կուտումե-Կոտում բնակավայրի գրավումն ու տեղում ուրարտական հենակետ-ամրոցի կառուցումը:

Արշավանքի դրդապատճառներից զատ, կարևոր է նաև հնարավորինս պատկերացում կազմել, թե երբ է այն տեղի ունեցել և որ բնակավայրերով է անցել: Ինչպես արդեն վերն ասվեց, Ուրմիո լճի ավազանում բիայնական զորքերի նվաճումները թվագրվում են Ք.ա. 810 թ. առաջին կեսի վերջերից մինչև երկրորդ կեսի սկզբները: Հաշվի առնելով այն փաստը, որ մինչև գարնան ավարտը Հայկական Տավրոսի վրա դեռևս ձյուն է լինում, արշավանքը կարող էր տեղի ունենալ ամռան սկզբներից մինչև աշնան սկիզբն ընկած ժամանակահատվածում: Այսպիսով, նախկինում առաջ քաշված այն կարծիքը, թե Մենուայի ձեռնարկած արշավանքները դեպի արևմուտք և հարավ-արևմուտք, ի տարբերություն հյուսիսային «երկրի», ժամանակագրական տեսակետից կարող էին երկրորդական տեղ գրավել, ոչ մի կերպ չի արդարացվում սույն արձանագրության քննությամբ: Բացի այդ, հարավ-արևմուտքում խնդիրն առավել բարդ էր և որոշ առումով նաև հրատապ, քանի որ այստեղ բախվում էին Բիայնիլիի և Ասորեստանի շահերը, որոնք ներկայացնում էր Մենուայի ախոյան և ժամանակակից Ասորեստանի արքա Ադադներարի Գ-ն (Ք.ա. 811-783 թթ.)[30]:

Մյուս կարևոր խնդիրը բիայնական զորաբանակի արշավուղու ճշգրտումն է, ինչը, ըստ մեզ, կարող էր անցնել երկու ճանապարհով: Առաջին հնարավոր տարբերակը Վանա լճի հյուսիսային ափերին առընթեր անցնող Վասպուրական-Տուրուբերան-Զորա պահակ-Աղձնիք երթուղին է: Ուղևորվելով մայրաքաղաք Տուշպայից՝ Մենուայի զորքերը կարող էին անցնել Վասպուրական և Տուրուբերան նահանգներով, այնուհետև Զորա պահակով թափանցել Ալզի-Աղձն/Արձն, Վանա լճի հարավարևմտյան անկյունում գրավել Ալզիի Կուտումե-Կոտում

[30] Նույն տեղում, էջ 122, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 303:

բնակավայրը և ապա՝ ամբողջ Ալզի «երկիրը», իսկ վերջում՝ հաղթահարել Հայկական Տավրոսն ու իրեն ենթարկել Շաշնու-Սասունը: Այսուհանդերձ, առավել հակված ենք կարծելու, որ ավելի շուտ այդ ճանապարհն անցել է Վանա լճի հարավային առափնյա երթևեկելի հատվածներով՝ Վասպուրական (Ռշտունիք)-Տուրուբերան (Երնարք)-Աղձնիք (Ալզի-Աղձն/Արձն)-Կոտում (Կուտումե)-Սասուն (Շաշնու) երթուղով[31]: Այլ կերպ ասած՝ ուրարտական զորքը Վանա լճի հարավում կտրելանցել է Ռշտու-նիքն ու Երնարքը, գրավել Ալզիի Կուտումե-Կոտում քաղաքը, ապա ամբողջ Ալզի-Աղձն/Արձնը և վերջում միայն հարավից կամ հարավ-արևելքից ներխուժել Շաշնու-Սասուն:

Արշավանքի հետևանքով Բիայնայի արքան՝ Մենուան, ըստ մեզ, նվաճել է Սանասունքի գավառակենտրոն Սասունը՝ իր շրջակայքով, ինչպես և հնում Սանասունքի մասերը կազմած Երխեթք, Գզեղխ և Սալնաձոր գավառների տարածքները: Դա ավելի հավանական է թվում՝ հաշվի առնելով նախ այն, որ նշված գավառները գտնվել են Սանասունքի հյուսիսարևելյան հատվածում, և ապա՝ Սանասունքի բնակավայրերից Սասունն ակնհայտորեն առավել մոտ է թե՛ Կուտումե-Կոտումին, թե՛ Բաղեշի լեռնանցքին և ուղիղ գծով տեղադրված է Արձնից հյուսիս: Ալզիից, հավանաբար, նա նվաճել է դրա հյուսիսային շրջանները, և Կուտումեի գրավումը, ըստ ամենայնի, դրա վառ վկայությունը կարող է լինել:

Քանի որ այստեղ չի նշվում Քաղիրթի ափին տեղայնացվող Կուլիմերի-Քղիմար բնակավայրը, կարելի է ասել, որ Վանի թագավորության զորքը չի հասել այդտեղ: Ավելին՝ բիայնացիների զորաբանակը հազիվ թե անցած լիներ նույնիսկ Քաղիրթից բավական արևելք՝ Հայկական Տավրոսից սկիզբ առնող Արզան գետը: Բացի այդ, չնայած խնդրո առարկա սեպագիր հաղորդման մեջ Մենուան հայտնում է, թե ինքը նվաճել է Ալզի և Շաշնու «երկրները», մեր կարծիքով, դա չափազանցություն է, և իրականում խոսքը կարող էր վերաբերել այդ «երկրների» միայն որոշակի հատվածին:

Այսպիսով, Մենուայի արշավանքն Աղձնիք իր գահ բարձրանալու տարում ունեցավ հետևյալ ռազմաքաղաքական և տնտեսական հետևանքները.

1. Արշավանքը, որի հետևանքով Զորա պահակը կամ Բաղեշի լեռնանցքը հայտնվել է Վանի թագավորության վերահսկողության ներքո, տեղի է ունեցել Ք.ա. 810 թ. ամռան սկզբներից մինչև աշնան սկիզբն ընկած ժամանակահատվածում՝ Աղձնիքի հյուսիսային շրջաններում:

---

[31] Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, հեղ.՝ Հարությունյան Բ., Ե., 2007, էջ 42-43, Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, էջ 40-41:

2. Զորա պահակով անցնող ռազմավարական խիստ կարևոր նշանակության ճանապարհը վերահսկելու համար Մենուան ամրոց-հենակետ է կառուցում Կուտումե-Կոտումում:

3. Բիայնական բանակը եղել է Քաղիրթ գետից արևելք և հյուսիս-արևելք ընկած տարածքների մեծ մասում՝ անցնելով «Աշխարհացույց»-յան Աղձնիքի ութ գավառներով, սակայն դժվար է հիմնավորապես խոսել այս տարածաշրջանում նրա իրական ռազմական հաջողությունների մասին: Ամեն դեպքում արշավանքի հետևանքով Վանի թագավորության քաղաքական ազեցության գոտում է ներառվել առնվազն Աղձնի և Սանասունքի մի հատվածը:

4. Մենուային, ըստ էության՝ չի հաջողվել իր տերությանը միացնել Ալզի և Շաշնու «երկրները»: Նախ, նա լռում է այդ մասին, ինչը լիովին հակասում է Վանի տիրակալների վարքագծին, և ապա արձանագրությունում իսպառ բացակայում են կողմնակի տվյալներ, որոնք կարող էին փաստել Աղձնիքի տարածաշրջանում ուրարտական զորքերի խոշոր հաջողությունների մասին (գերիներ, ավարառություն, տարածքի նվաճում՝ տերությանը կցելով և այլն): Թերևս միակ հաղորդումը, որն արժանահավատ հիմքեր ունի, Կուտումե-Կոտումի գրավումն է, և ուրարտական ամրոց-հենակետի կառուցումը նույն բնակավայրում: Այսպիսով, այս պարագայում կարելի է խոսել թերևս տվյալ տարածաշրջանի՝ ընդամենը Վանի թագավորության ժամանակավոր գերիշխանությանը ենթարկվելու մասին:

5. Արշավանքը հիմնականում միտված էր թուլացնելու կամ չեզոքացնելու Ասորեստանի ազդեցությունը Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում, ապահովելու երկրի «դարպասների» ամրության վերահսկումը ասորեստանյան ռազմական ոտնձգություններից: Մյուս կողմից՝ այն Աղձնիքի տարածքում էլ ավելի խորանալու և Վանի թագավորության քաղաքական ազդեցությունը հաստատելու և ամրապնդելու նախադրյալներ էր ստեղծում՝ ապահովելով թիկունքի ամրությունը և ավելի հարավ ծավալվելու լայն հնարավորությունները: Ըստ ամենայնի, դրան էր միտված համապատասխանաբար Վերին Տիգրիսի ավազանում և Հայկական Տավրոսում գտնվող Ալզի և Շաշնու «երկրների» հնազանդեցումը կամ Վանի թագավորությանը ենթարկելու փորձը:

6. Ըստ էության, Վանի թագավորության վերահսկողության տակ հայտնվեցին Աղձնիքի հյուսիսարևելյան և արևելյան լեռնային շրջանների մետաղահանքերը, որոնք կարող էին կապարով և երկաթով ապահովել տերությունը, ինչպես նաև այդ շրջաններով անցնող ու Միջագետքը Հայկական լեռնաշխարհի հետ կապող առևտրական ուղիները:

## ПЕРВАЯ ВОЕННАЯ КАМПАНИЯ МЕНУА В АЛДЗНИК В ГОД ЕГО ЕДИНОЛИЧНОГО ВОЦАРЕНИЯ НА ПРЕСТОЛ

ХУДАНЯН А. О.

Резюме

Урартская клинописная надпись, найденная в поселении Патноц-Бадноц, имеет определенное значение для реконструкции исторических событий. Исследование надписи указывает на то, что первая кампания Менуа в Алдзник должна, несомненно, датироваться первым годом его единоличного правления, т.е. 810 г. до н. э. В результате этой военной кампании Менуа завоевал северо-восточные и восточные районы горного хребта Армянского Тавра и бассейна Верхнего Тигра. Таким образом, можно предположить, что горный перевал Бахеша (Битлис) или Дзора паак, упоминающийся в армянских средневековых источниках, перешел под контроль Ванского царства (Урарту). Этот перевал имел важное значение, поскольку, с одной стороны, он служил в качестве ворот, ведущих во внутренние области Армянского нагорья, а с другой – препятствовал вторжению Ассирии в Урарту.

В результате Менуа не только утвердил свое военно-политическое влияние на землях Алзи и Шашну, но и создал возможность для расширения урартской экспансии на юг.

## MENUA'S FIRST MILITARY CAMPAIGN TO AGHDZNIK IN THE YEAR OF HIS SOLE ENTHRONEMENT

H. KHUDANYAN

Abstract

The Urartian cuneiform inscription found from Patnots-Badnots settlement is of certain importance for the reconstruction of historical events. The study of the inscription indicates that Menua's first military campaign to Aghdznik should be undoubtedly dated by the first year of his sole reign, that is to say, 810 BC. In the result of this military campaign Menua invaded the north-eastern and eastern regions of the Armenian Taurus mountain range and the Upper Tigris. Therefore, it may be assumed that the mountain pass of Baghesh (Bitlis) or Dzora pahak (canyon guard) of Armenian medieval records passed under the control of the Kingdom of Van (Urartu). This pass was of important significance for on the one hand it served as gates leading to the inner regions of the Armenian Highland and on the other hand it hindered Assyria to intrude into Urartu. Besides, the rich steel and lead mines passed under its dominion. As a consequence, Menua not only established his military-political influence over the lands of Alzi and Sasnu but he created new possibilities for the Urartian expansion southward.